ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» դեկտեմբերի 2011թ. N__-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 165.1 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ 629.43ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ 31.33 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒ 27.9 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 87-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 2010 թվականի նոյեմբերի 26-ի հ.162-Ն որոշման 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Օտյան փողոցի հ. 66 հասցեում գտնվող՝ 165.1 քմ մակերեսով բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 629.43քմ մակերեսով հողամասը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Պերճուհի Բոզուկյանին, Օվսաննա Բոզակյանին, Մարուսյա Մկրտչյանին, Արմեն Գասպարյանին, Արսեն Գասպարյանին, Հակոբ Աթիկյանին, Նարինե Միլիտոնյանին, Աննա Աթիկյանին, Լիլիթ Աթիկյանին, Խաչեր Աթիկյանին, Նշան Աթիկյանին, Սրբուհի Մաթևոսյանին, Հովհաննես Աթիկյանին, Մարիամ Աթիկյանին, Ալեքս Աթիկյանին, իսկ 31.33քմ մակերեսով հողամասը և 27.9 քմ մակերեսով շինությունը տրամադրել անհատույց օգտագործման իրավունքով (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 28.10.2011թ. հ2678388 վկայական)։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 165.1 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺՇԵՏ 629.43ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ 31.33 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒ 27.9 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օտյան փողոցի հ.66 հասցեում հաշվառված և բնակվում են Պերճուհի Բոզուկյյանը՝ 08.01.1955թ.-ից (հիմք՝ քաղաքացիներին գրանցելու համար տնային գիրքը) իր ընտանիքի անդամների՝ Օվսաննա Բոզակյյանի, Հովհաննես Բոզակյյանի, Մարուսյա Մկրտչյանի, Արմեն Գասպարյանի, Արսեն Գասպարյանի, Հակոբ Աթիկյանի, Նարինե Միլիտոնյանի, Աննա Աթիկյանի, Լիլիթ Աթիկյանի, Խաչեր Աթիկյանի, Նշան Աթիկյանի, Սրբուհի Մաթևոսյանի, Հովհաննես Աթիկյանի, Մարիամ Աթիկյանի և Ալեքս Աթիկյանի հետ միասին:

Մինչ օրս Օտյան փողոցի հ.66 հասցեում գտնվող անշարժ գույքը հնարավոր չի եղել մասնավորեցվել նշված ընտանիքի անդամների կողմից, քանի որ այն Շահումյանի շրջանի ժողովրդական դատարանի 1963 թվականի որոշմամբ վարկի պարտքի դիմաց պետականացվել և հանձնվել է նախկին Շահումյանի շրջսովետի բնակֆոնդի վարչությանը:

Օտյան փողոցի հ.66 հասցեում գտնվող անշարժ գույքը 28.10.2011թ.-ին գրանցվել է Երևան համայնքի անվամբ (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 28.10.2011թ. հ2678388 վկայական), քանի որ ՀՀ կառավարության 1997 թվականի մարտի 13-ի N42 որոշման համաձայն, Երևան քաղաքի պետական բնակարանային ֆոնդը հանդիսանում է Երևանի թաղային համայնքների սեփականությունը, իսկ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Երևան թաղային համայնքների սեփականություն համարվող գույքը սեփականության իրավունքով փոխանցվել է Երևան համայնքին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևան համայնքի սեփականությունը համարվող գույքը կարող է տրամադրվել անհատույց օգտագործման կամ անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, իսկ Օտյան փողոցի հ.66 հասցեում գտնվող անշարժ գույքը հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը, որտեղ բնակվում են նշված բազմանդամ ընտանիքի անդամները, հարցի կարգավորման համար նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշման նախագիծ:

Որոշման նախագծում Օտյան փողոցի հ.66 հասցեում գտնվող՝ 165.1 քմ մակերեսով բնակելի տունը և դրա զբաղեցրած, սպասարկման համար անհրաժեշտ 629.43քմ մակերեսով հողամասը առաջարկվում է սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) վերը նշված քաղաքացիներին, իսկ 31.33քմ մակերեսով հողամասը և 27.9 քմ մակերեսով շինությունը՝ անհատույց օգտագործման իրավունքով, քանի որ 31.33քմ մակերեսով հողամասը գտնվում է ՀՀ հողային օրենգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և չի կարող փոխանցվել սեփականության իրավունքով:

Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 87-րդ հոդվածի՝ այդ հողամասերի վրա կառուցված շինությունները կարող են տրամադրվել օգտագործման կամ կառուցապատման իրավունքով, ինչի հետ կապված առաջարկվում է 31.33քմ մակերեսով հողամասը և 27.9 քմ մակերեսով շինությունը տրամադրել անհատույց օգտագործման իրավունքով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ հողամասով ծանրաբեռնված շինությունը հանդիսանում և օգտագործվում է որպես բնակելի տուն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 165.1 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ 629.43ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ 31.33 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒ 27.9 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող 165.1 քմ մակերեսով բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 629.43 քմ մակերեսով հողամասն անհատույց օտարելու և 31.33 քմ մակերեսով հողամասը ու 27.9քմ մակերեսով շինությունն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 165.1 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ 629.43ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ 31.33 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒ 27.9 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող 165.1 քմ մակերեսով բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 629.43 քմ մակերեսով հողամասն անհատույց օտարելու և 31.33 քմ մակերեսով հողամասը ու 27.9քմ մակերեսով շինությունն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ